Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչին համապատասխան:

Կատարող՝ Հասմիկ Եղոյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

ԳԼՈՒԽ 1.Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան.....5

1.1 Ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումը՝ համապատասխան կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին…….....5

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները …….....8

Գլուխ 2. Գործնական աշխատանք: Դաստիարակի մանկավարժական աշխատանքի պլանավորում…….....14

Եզրակացություն…….....18

Օգտագործված գրականության ցանկ…….....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Այս հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հիմնախնդրով, որ նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան, ուսումնական պարապմունքների ճիշտ և արդյունավետ անցկացումը անհրաժեշտություն է մանկավարժական աշխատողի համար: Ուսուցման արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է նախադպրոցական մանկավարժը տիրապետում ուսումնական ծրագրին, ավանդական և նոր մեթոդներին, հնարներին, որոնց օգնությամբ կարելի է երեխաների ուսուցման արդյունավետությունը հասցնել առավելագույն աստիճանի: Եվ կարևոր է, որ այն համապատասխանի կրթության պետական չափորոշչին, քանի որ չափորոշիչն այն հիմնական ուղեցույցն է, որի պահանջների համապատասխան պետք է պլանավորվի ուսումնական պարապմունքը:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի նախնական աստիճանն է համարվում: Այն ամբողջական գործընթաց է՝ ուղղված նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացմանը:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը, քանի որ կարևոր է անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի հանդեպ: Չափորոշչում հստակ ամրագրված են նախադպրոցականի կրթության ու զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջներն ու կարողունակությունները:

Ուստի, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, յուրաքանչյուր մանկավարժական աշխատող պետք է պահպանի նախադպրոցական կրթության պետական չափորոշչային պահանջները, որպեսզի ունենա համապատասխան վերջնարդյունքներ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում երեխայի առողջության և բնականոն զարգացման համար, որպեսզի դեպի դպրոց երեխայի անցումը լինի սահուն:

Նախադպրոցական տարիքի երեխան մանկապարտեզում պետք է լինի ապահով, ստանա տարիքային առանձնահատկություններով պայմանավորված ուսուցում, դաստիարակություն, հմտություններ և կարողունակություններ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք (հոդված 25):

՝ Երեխայի իրավունքների հռչակագիրը՝ ևս ելնում է այն կանխադրույթից, որ երեխան ունի հատուկ պաշպանության և հատուկ հոգատարության կարիք, և ընդգծում, որ մարդկությունը պարտավոր է տալ երեխաներին իր ունեցած լավագույնը:

Իսկ եթե *՝Երեխայի իրավունքների մասին՝ ՄԱԿ-ի կոնվենցիան դարձավ այն բեկումնային կետը, որից հետո աշխարհն ընդունեց, որ երեխաները ոչ միայն պաշպանվածության օբյեկտներ են, այլև քաղաքացիական ու քաղաքական*

իրավունքների կրողներ (Մոդ դե Բուր Բուկիկիո, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ[1)], ապա անհրաժեշտ է հարգանք դրսևորել բոլոր երեխաների նկատմամբ, նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, ովքեր կարող են տարբեր տեմպերով զարգանալ:

Իրենց բնածին ունակություններով երեխաները տարբեր են, որոշ երեխաներ կարող են արագ հարմարվել նոր պահանջներին և պայմաններին: Որոշ երեխաներ կարող են բարձր ցուցանիշներ դրսևորել, ուրիշները՝ ավելի ցածր: Եվ այսպիսի տարբերությունները բնական են: Անհրաժեշտ է անհատական մոտեցում ձևավորել յուրաքանչյուր երեխայի հանդեպ:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը, հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի պետք է ընթանա և կարևոր են բոլոր ոլորտները հավասարապես արժևորվեն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

Նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ներկայացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հետազոտության նպատակը: Փորձարարական աշխատանքի ընթացքում մեր

առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

● Ուսումնասիրել պլանավորման գործընթացի էությունը,

● Ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման անհրաժեշտությունը,

● Վերլուծել չափորոշչային վերջնարդյունքները,

● Պլանավորման օրինակ ներկայացնել:

---

[1] ‘extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf
‘Եկեք սովորենք երեխայի իրավունքները’ ուղեցույց ուսուցիչների համար,Երևան, 2021

ԳԼՈՒԽ 1. Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

1.1 Ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումը՝ համապատասխան կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացումը չի կարող կատարվել առանց դաստիարակի աշխատանքի նախնական պլանավորման: Պլանավորումը մանկավարժության մեջ կրթական գործընթացի կառուցումն է, որպեսզի ուսումնական պլանի խնդիրներն ի կատար ածվեն: Դաստիարակը ղեկավարվում է ծրագրով և այն իրականացնում է պլանավորման միջոցով:

Ուսումնական գործընթացի հիմքը պլանավորումն է, որը ուսումնական գործընթացի մանկավարժական գործունեության նախագիծ է: Պլանավորումը նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական գործընթացի գիտականորեն հիմնավորված կազմակերպումն է, որը տալիս է նրան բովանդակություն, որոշակիություն և վերահսկելիություն:

Նախադպրոցական հաստատությունում դաստիարակության և կրթական աշխատանքի պլանավորումը հիմնական կրթական ծրագրի իրականացման գործընթացի կառավարման հիմնական գործառույթներից է և արտացոլում է մեծահասակների և երեխաների գործունեության կազմակերպման տարբեր ձևեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքն իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Ցանկացած պլան կառուցվում է ընթացիկ և առաջիկա (հեռանկարային) աշխատանքների միասնության մեջ նվազագույն ջանքերի ներդրմամբ՝ կոնկրետ նպատակներին հասնելու, վերջնական որոշումների կայացման բարձր արդյունավետությամբ:

Փորձը ցույց է տալիս, որ պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն հենվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության, տվյալ փուլում ծառացած հեռանկարային խնդիրների հաշվառման վրա[2]:

Նախադպրոցական մանկավարժական աշխատողները պատասխանատու են պարապմունքների հագեցվածության համար, որպեսզի պայմաններ ստեղծվեն երեխաների լիարժեք զարգացման և կրթության համար: Նրանց գործառույթն է նաև՝ երեխայի հետ դաստիարակչական աշխատանք տանել, ամենօրյա աշխատանքում հաշվի առնել երեխաների անհատական առանձնահատկությունները, նրբանկատություն և համբերություն ցուցաբերել նախադպրոցականների, նրանց ծնողների և գործընկերների հետ շփվելիս:

[2] Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան՝Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար՝, էջ 35,116

Որքան լավ պատրաստված լինի դաստիարակը, որքան հարուստ լինի նրա մանկավարժական և ընդհանուր գիտելիքների պաշարը, շատ ու բազմակողմանի հմտություններ ունենա, այնքան բովանդակալից և հետաքրքիր կլինի երեխաների ինքնութույն գործունեությունը: Նոր խնդիրների հաջող լուծումն ի վերջո կախված է դաստիարակից՝ այն բանից, թե որքան խորն է նա ուսումնասիրել ծրագիրը և որքան մանրազնին է նախապատրաստվել դրա իրականացմանը: Ծրագիրը նախատեսում է, թե ինչ է անելու դաստիարակը տարվա ընթացքում: Այն ընդգրկում է դաստիարակչական խնդիրների ամբողջ գումարը, գիտելիքների, կարողությունների և ունակությունների ծավալը / ըստ եռամսյակների /, բացահայտում է խմբի կյանքի կազմակերպումը և երեխաների գործունեության տեսակները:

Դաստիարակը երեխային պետք է վերաբերվի որպես հավասարի, որն ունի իր սեփական ցանկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները: Այդ իմաստով սկզբունքորեն փոխված են դաստիարակ-երեխա փոխհարաբերությունները, ինչը նոր խնդիրներ է դնում դաստիարակի առջև:

Նոր ծրագրով աշխատող դաստիարակը ստեղծագործելու ազատության հնարավորություն ունի, ինչը կբարձրացնի նրա պատասխանատվությունն իր աշխատանքի նկատմամբ, կընդլայնի նրա պատկերացումները յուրաքանչյուր երեխայի զարգացման և որակի մասին, կկատարելագործի նրա մասնագիտական վարպետությունը՝ շնորհիվ երեխաների հետ շփման բազմազան միջոցների տիրապետման և դպրոցի նախապատրաստման փուլում նրանց գործունեության ղեկավարման: Այդ բոլորը կնպաստեն նաև դաստիարակի մտահորիզոնի ընդլայնմանը, նրա ընդհանուր զարգացմանը և իր աշխատանքի սոցիալական նշանակության ընկալմանը:

Երեխայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման մոտեցմամբ (անհատական կողմնորոշման սկզբունքով, միշտ հիշելով, որ երեխան անհատականություն է, իսկ յուրաքանչյուր երեխա դաստիարակից պահանջում է անհատական մոտեցում, և չպետք է սահմանափակվել վարչական հրահանգներով) դաստիարակի դիրքորոշումը կհանգեցնի ուսուցման և դաստիարակության արդյունավետության բարձրացմանը, մեծահասակի նկատմամբ երեխայի վստահության խնդրի լուծմանը: Առաջնորդվելով անհատակողմնորոշիչ մոդելով, որի նպատակն է անհատի ձևավորումը, դաստիարակը երեխայի զարգացումը չի հարմարեցնում եղած ծրագրին, կանոններին, այլ երեխային օգնում է և նախազգուշացնում՝ կանխելու նրա անհատական զարգացման հնարավոր դժվարությունների առաջացումը: Երեխային տրվում է ազատ զգալու և գործելու հնարավորություն: Գիտելիքները և հմտությունները դիտվում են ոչ թե նպատակ, այլ՝ անհատի զարգացման միջոց:

Դաստիարակը երեխայի ուսուցումը և դաստիարակությունն իրականացնում է հաղորդակցման, շփման եղանակով, որի ընթացքում նա ուսումնասիրում է երեխային, բացահայտում նրա նախասիրությունները, համատեղ գործելով հայտնվում է նրա դիրքում, հաշվի առնում տեսակետները, զգացմունքները, հույզերը՝ երբեք չանտեսելով դրանք:

Դաստիարակի շփման դիրքորոշումն է՝ ելնել երեխայի շահերից և նրան տեսնել՝ որպես մեր հասարակարգի լիարժեք անդամ: Մանկավարժական

հաղորդակցումը լինում է բնական պայմաններում, և երեխաներին ներկայացվում է ազգային հենքով[3]:

Թեմատիկ պլանավորման ժամանակ մեծ նշանակություն ունի առավոտյան զրույցի կազմակերպումը: Զրույցը համարվում է մանկավարժական աշխատանքի կարևորագույն մաս, քանի որ նպաստում է երեխաների խոսքի և մտածողության զարգացմանը: Երեխայի հետ խոսելիս անհրաժեշտ է լինել անկեղծ ու հանգիստ, առանց ավելորդ հուզականության, զրուցել և արձագանքել նրա տարբեր հուզական դրսևորումներին և պատասխանել նրա հարցերին:

Նախադպրոցական մանկավարժական աշխատողը պետք է իրազեկ լինի ՀՀ օրենքով սահմանված իր իրավունքներին ու պաշտոնային պարտականություններին: Նախադպրոցական մանկավարժների պաշտոնային պարտականությունները հստակ սահմանված են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

- Դաստիարակը անմիջական պատասխանատվություն է կրում կոնկրետ ուսումնական պարապմունքի պլանավորման ու անցկացման համար:
- Պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան[4]:
- Կատարում է ամենօրյա աշխատանք երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման և ադապտացիայի համար: Պլանավորում է շտկողական, զարգացման աշխատանք հոգեբանի հանձնարարականի վրա հիմնված, բուժ- աշխատողի հետ համատեղ ապահովում է սաների առողջության պահպանումը, ամրապնդումը: Պատասխանատու է նրանց կյանքի և առողջության համար:
- Կազմակերպում է օրվա ռեժիմը: Աշխատանք է տանում երեխաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման համար:
- Ուսումնասիրում է երեխաների անհատական ունակությունները, համագործակցում ծնողների հետ:
- Պլանավորում և կազմակերպում է կրթադաստիարակչական աշխատանքները, մանրազնին պատրաստվում է պարապմունքներին:
- Ուսումնասիրում է երեխաների անհատական հետաքրքրությունները:
- Երեխաների հետ շփման ժամանակ ցուցաբերում է զսպվածություն, մանկավարժական տակտ:
- Երաժշտության դաստիարակի հետ նախապատրաստում է տոները, ժամանցային, մարզական պարապմունքները:
- Օգնում է նոր հաճախող երեխաներին հարմարվելու մանկապարտեզի պայմաններին:

---

[3] 6. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան՝Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար՝,էջ 117-118

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=67862 ՝ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին՝

- Իրավասու է՝ կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ, նյութեր , բարձրացնել մասնագիտական որակավորումը, մասնակցել հաստատության կառավարման գործընթացին, պատասխանատու է կրթական ծրագրի իրականացմանը, ինչպես նաև երեխաների կյանքի և առողջության պահպանման համար և այլն:

Դաստիարակը մշտապես երեխաների կողքին է՝ խմբում, զբոսանքի, ճաշի և քնի ժամանակ: Նա պետք է վերահսկի նրանց բարեկեցությունն ու անվտանգությունը: Դաստիարակը վերահսկում է կարգուկանոնը և կարգապահությունը, կազմակերպում է հանդեսներ և ցերեկույթներ: Եվ այս ամեն գործառույթները իրականացնելու համար շատ կարևոր է, որ ուսումնական պարապմունքները պլանավորի ժամանակակից մեթոդներով, նորարարական տեխնոլոգիաներով:

Այս ամենն ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդամանկավարժական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, ինքնակրթվեն և արդյունավետ համագործակցեն միմյանց հետ:

Այս ամենը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար, նախադպրոցական մանկավարժը պետք է քաջածանոթ լինի նախադպրոցական կրթության պետական չափորոշչային պահանջներին:

1.2.Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները

2021թ.-ի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց նոր նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, որը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է,որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Չափորոշիչը ներառում է.

1.Ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները:

2.Երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը:

3.Երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը:

4.Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության կառավարման լիազորված մարմինը:
5.Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրական ձևից և ենթակայությունից:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Կարողունակությունները երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով[5]:

Վերջնարդյունքներն ուղղված են հետևյալ կարողունակությունների ձևավորմանը.

1.**<u>Լեզվական և հաղորդակցման կարողունակություն</u>**

Լեզվական և հաղորդակցական կարողունակությունը սանի այն հատկությունն է, որով նա որոշակի հարաբերությունների մեջ է մտնում ուրիշների հետ, ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով տեղեկությունը: Այս կարողունակության օգնությամբ խթանվում է նախադպրոցականի կապակցված խոսքը, պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններ կազմելու ունակությունը, հասակակիցների և մեծահասակների հետ զրույցելու կարողությունը: Լեզվական և հաղորդակցական կարողունակությունը, կարելի է ասել, հիմք է հանդիսանում մյուս կարողունակությունների ձևավորման համար:

՝Ակտիվ խոսքի կարողությունները պայմանավորված են աստիճանաբար հարստացվող պասիվ բառապաշարով, որը զգալի հզոր է ակտիվից: Խոսքի ձևավորումը վաղ տարիքում ընթանում է հետևյալ հաջորդականությամբ՝ ընկալվում

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152575 ՝Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝:

և յուրացվում է բառի իմաստային նշանակությունը, այդ բառերն իրենց տեղն են գտնում երեխայի պասիվ բառապաշարում, որից հետո դրանք ակտիվանում են’[6]:

2. **<u>Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն</u>**

Սաները դրսևորում են ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով, ակտիվ ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ:

3. **<u>Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն</u>**

Երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ:

4. **<u>Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն</u>**

Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին, դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին:

5. **<u>Թվային և մեդիա կարողունակություն</u>**

[6] Ա Մարության, Ա. Դալլաքյան՝Նախադպրոցական մանկավարժություն’, էջ 33

Երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6. **<u>Մշակութային կարուղունակություն</u>**

Երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

7. **<u>Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն</u>**

Երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ:

8. **<u>Տնտեսական կարողունակություն</u>**

Երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության

առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9. **<u>Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն</u>**

Երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի,սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն,կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն[7]:

Այս կարողունակությունները մեկը մյուսին լրացնող, շարունակող և ամբողջացնող կետեր են, որոնք սաների նախադպրոցական կրթության մեջ ունեն իրենց ուրույն տեղը:



Միլլերի աստիճանակարգումը[8]

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152575 'Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ':
[8] Ս. Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էլբերտ հիմնադրամ ,էջ 58

Դաստիարակության նպատակը, ըստ Պեստալոցցու, մարդու բոլոր բնական ուժերի ու ընդունակությունների զարգացումն է, ըստ որում զարգացումը պետք է լինի բազմակողմանի և ներդաշնակ:

***

Ռուսսոյի մանկավարժական հայացքների հիմքում ընկած են բնական և ազատ դաստիարակության սկզբունքները: Մարդը, ըստ Ռուսսոյի, իր դաստիարակությունը ստանում է բնությունից, իրերից և մարդկանցից: Երեխայի դաստիարակությունը արդյունավետ կլինի, եթե այդ երեք գործոնները ձգտեն միևնույն նպատակին, չհակասեն իրար, այլ համագործակցեն իրար հետ:

***

'Սիրտս նվիրում եմ երեխաներին' գրքում Սուխոմլինսկին պարզ ցույց է տալիս, որ երեխաների հարմոնիկ զարգացմանը ուղղված, դաստիարակի աշխատանքի հաջողությունը հնարավոր է միայն ամեն մի երեխայի հոգևոր կյանքի և զարգացման առանձնահատկությունների խորը իմացության դեպքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1)շարժողական ոլորտ,

2)խոսքի և հաղորդակական ոլորտ,

3)հուզական, սոցիալ-անձնային ոլորտ,

4)իմացական ոլորտ,

5)ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ [9]:

Երեխաները պետք է բնականոն ինտեգրվեն սոցիալական միջավայրին, ունենան տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կապակցված խոսք, ֆիզիկական պատրաստվածություն, իմանան ու ճանաչեն ազգային ավանդույթներն ու տոները, ունենան տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն:

Ուսումնական գործընթացը պլանավորելիս մանկավարժը հիմնում է 3 հիմնական աղբյուրների վրա՝

1. Երեխաների անհատական դիտում, ինչն ուսուցիչը սահմանում է յուրաքանչյուր երեխայի համար,

2. Որոշակի խմբով երեխաների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ,

3. Երեխաների և նրանց զարգացման վերաբերյալ ուսուցչի ընդհանուր գիտելիքներ:

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152575 'Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ':

Պարապմունքերի պլանավորման գործընթացում ելեկետային է համարվում երեխաների ուսումնական խաղային բեռնվածության երաշխավորվող չափի, երեխայակենտրոն ուսուցման ու դաստիարակության շարունակական կրթության ապահովման պահանջը:

Նախադպրոցական հասակի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոց են դիդակտիկ խաղերը:

Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, ուստի և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքի միջոցով:

Նախադպրոցական տարիքում առաջատարը խաղային գործունեությունն է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխան օրվա ընթացքում մոտավորապես 3 ժամ է տրամադրում խաղին: Խաղի զարգացմամբ կարևոր փոփոխություններ են տեղի ունենում երեխայի հոգեկան աշխարհում և նրանում զարգանում են հիմնական այն գործընթացները, որոնք նախապատրաստում են երեխային իր զարգացման նոր, առավել բարձր աստիճանի:

Երեխայի զարգացման գործընթացում էական նշանակություն ունեն դիդակտիկ խաղերն ու շարժախաղերը, որոնցում ձևավորվում են երեխաների ճանաչողական գործընթացները:

Գլուխ 2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դաստիարակի մանկավարժական աշխատանքի պլանավորում

ԹԵՄԱ՝ «ՁՄԵՌ»

ՆՊԱՏԱԿԸ՝

● Սաներին ծանոթացնել ձմեռ եղանակի հետ՝ ընդհանրացնելով ձմռանը տեղի ունեցող փոփոխությունների, ձյան փաթիլի, եղանակային փոփոխությունների մասին պատկերացումները:

●Նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

●Ձևավորել համապատասխան վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ:

● Զարգացնել հաղորդակցական հմտությունները՝ սաների մոտ ձևավորելով զրուցելու, հարցերին պատասխանելու ունակությունները:

Թեմայի խնդիրները՝

●Հաղորդել տարրական գիտելիքներ տարվա եղանակների, դրանց հերթագայությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում կատարվող փոփոխությունների մասին:

● Պատկերացում տալ ձյան հատկությունների մասին:

●Նկարի պատմում հարցերի միջոցով:

Կիրառել՝

● Ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման մեթոդներ (փոխգործուն կամ ինտերակտիվ):

● Խաղային մեթոդների ժամանակ ուսուցանվող նյութը տրվում է տարբեր խաղերի, դերային գործողությունների միջոցով: Այն ունի բազմաթիվ առավելություններ:

● Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիքը հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ինքնուրույն կողմնորոշմանը[10]:

●Ինտերակտիվ տեխնոլոգիաներ.

Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են:

[10] Ս. Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ էլբերտ հիմնադրամ ,էջ 58

‘Խաղը միշտ իրականացվում է ինքնակամորեն, ներառում է մրցակցության տարրեր, մասնակիցներին հաճույք է պատճառում, օգնում ինքնահաստատվելու’:
Մուխինա

ա. Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ:
բ. Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:
գ. Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության:
դ. Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում է ինքնագնահատականը:
ե. Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորելու:
զ. Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը և այլն[11]:

●ՏՀՏ բաղադրիչ:

●Անհրաժեշտ պարագաներ, դիդակտիկ միջոցներ, թեմատիկ խաղալիքներ:

Թեմայի վերջնարդյունքը՝

●Ճանաչի տարվա եղանակները և բնության որոշ երևույթներ՝ օր, ձյուն, քամի,
●Նկատի բնության գեղեցկությունը,
●Դրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ,
●Դրսևորի ճիշտ վարքագիծ բնության գրկում:

Թեմայի լավ ընկալման նպատակով անցկացնել նաև ցուցադրական ինտեգրված պարապմունք, որն իր մեջ ներառում է երգ, պար, ասմունք, ծեփ, նկարչություն, բեմադրություն, տեսաֆիլմի դիտում:

Սաների մեջ կզարգանան հետևյալ կարողունակությունները՝

●լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

●ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,

●ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

[11] Լ.Վ. Գևորգյան՝Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները’,Մանկավարժություն, 2015,էջ75

●ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

●մշակութային կարողունակություն:

Սաների մեջ կզարգանան նաև հետևյալ ոլորտները՝

●Խոսքի և հաղորդակցության ոլորտ
Ընկալում է նկարի բովանդակությունը և վերարտադրում այն
●Հուզական, սոցիալական ոլորտ
Սոցիալական հույզերի միջոցով արտահայտում է իր վերաբերմունքը շրջապատող աշխարհին
●Իմացական ոլորտ

Երեխաների ճիշտ դաստիարակությունից է կախված ժողովրդի բարեկեցությունը:

Ջոն Լոք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտոտական աշխատանքիս ընթացքում կարևորել եմ և առանձնացրել մի քանի եզրահանգումներ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար հարկավոր է, որ մանկավարժական աշխատողը ճշգրիտ պլանավորի իր աշխատանքը:

Պլանավորումը գործընթաց է, որի արդյունքը նպատակների հստակ ձևակերպումն է և այն մեթոդների ու միջոցների ճիշտ ընտրությունը, որով կարելի է հասնել դրված նպատակին:

Եթե նպատակ է դրվում սաների մեջ ձևավորել մի շարք առաջնային կարողություններ, որոնք սահմանված են կրթական չափորոշիչներով, ապա հարկ է, որ վերջինս դիմի ուսուցման նորարական տեխնոլոգիաներին, քանի որ դրանք նպաստում են, որ սաները լինեն ավելի նախաձեռնող և ինքնուրույն:

Ծանոթացա նաև Միլլերի աստիճանակարգմանը: Միլլերի աստիճանակարգումը Հայաստանում մեծ տարածում չունի: Բայց այն շատ կարևոր է գիտելիքը վարքագիծ դարձնելու առումով: Առաջին մակարդակում սովորողը պարզապես գիտի: Գիտենալը ուսուցման հիմքն է: Բայց սա բավարար չէ: Կարևոր է գիտելիքը օպերացիոն դարձնելը: Այս առումով երկրորդ մակարդակում սովորողը պետք է գիտելիքը գործողության մեջ դնի և իմանա՝ ինչպե՞ս, այսինքն՝ հասկանա: Երրորդ մակարդակում սովորողը պետք է կարողանա ցույց տալ՝ ինչպե՞ս: Վերջապես չորրորդ մակարդակում պետք է կարողանա կիրառել: Եթե ուսուցման գործընթացում սովորողն անցնի չորս փուլերով, ապա կարելի է ասել, որ նա լիարժեք սովորել է նյութը[12]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր պարապմունքի պլանավորման հենքը չափորոշիչն է: Դրանում ամրագրված դրույթներն ու

[12] Ս. Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էլբերտ հիմնադրամ ,էջ 58

սկզբունքները պարտադիր են նախադպրոցական կրթության պլանավորման համար:

Կրթության ու զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն: Երեխաները պետք է բնականոն ինտեգրվեն սոցիալական միջավայրին, իմանան ու ճանաչեն ազգային ավանդույթներն ու իրազեկ լինեն ազգային արժեքներին, ունենան տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն:

Այս ամենն ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդամանկավարժական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, ինքնակրթվեն և արդյունավետ համագործակցեն միմյանց հետ:

Առաջարկս է բոլոր նախադպրոցական մանկավարժներին, որ ուսման գործընթացից անցում կատարեն աշակերտակենտրոն ուսուցման:

'Եթե դուք ցանկանում եք, որ մանկավարժական աշխատանքը ուսուցչին ուրախություն պատճառի, այլ չվերածվի ձանձրալի և ամենօրյա միապաղաղության, ապա ուսուցչին դուրս բերեք հետազոտողի արահետ':

Սուխոմլինսկի

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ նախադպրոցականի արդյունավետ կրթությունն ու զարգացումը մանկապարտեզում մեծապես կախված է մանկավարժական բոլոր աշխատողների մարդկային, մասնագիտական որակներից, նաև իրենց գործառույթներն ու պարտավորությունն կատարելուց:

Օգտագործված գրականության ցանկ

1.Հ.Միտոյան, Լ.Սմբատյան ՝Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար՝,Երևան,2010

2.ՀՀ օրենք նախադպրոցական կրթության մասին

3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=67862 ՝ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին՝

4..https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152575 ՝Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝:

5. Ա. Մարության ,Ա Դալլաքյան ՝Նախադպրոցական մանկավարժություն՝

6.Ս. Խաչատրյան,Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ էլբերտ հիմնադրամ ,էջ 58

7. Լ.Վ. Գևորգյան՝Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները՝,Մանկավարժություն, 2015,էջ75